

# ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ, ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ


Posted on April 4, 2010 by Keghart



Category: [Opinions](#)




Գրիգոր Գրաճեան, Պէյրուժ, 4 Ապրիլ 2010

Անոր նեղլիկ թաղերուն մէջ ես: Կը քալես հայելով անձանօթ մարդոց: Կը նայիս վեր եւ  երկինքէն հազիւ կտոր մը կրնաս տեսնել: Հոտառութեան եւ լսողութեան զգայարաններդ ահագանգ կը հնչեցնեն, սակայն ընդհանուրին մէջ ապահով կը զգաս: Չորս կողմերէն հայերէն հնչիւններ ներկադ եւ անցեալդ խառնելով կը ստեղծեն մտքիդ մէջ գունաւոր պատկերը Պուրճ Համուտի:

Կը յիշե՞ս երբ « ճեննէթ» կը ծախէինք դուն եւ ես ուրիշ հարիւրաւոր փոքրերու հետ, Պուրճ Համուտի փողոցները ման գալով, բոպիկ, անտեսուած, մի քանի «ղուրուշ» վաստկելու համար: Գիշերէն կը պատրաստէինք յաջորդ օրուան ծախուելիք «ապրանքը», բրգածել թուղթերու մէջ լեցուած աղի մանր կուտերը, Պուրճ Համուտի 58-ի համբաւաւոր «ճեննէթ»ը:

Գրիգոր Գրաճեան, Պէյրուժ, 4 Ապրիլ 2010

Անոր նեղլիկ թաղերուն մէջ ես: Կը քալես հայելով անձանօթ մարդոց: Կը նայիս վեր եւ  երկինքէն հազիւ կտոր մը կրնաս տեսնել: Հոտառութեան եւ լսողութեան զգայարաններդ ահագանգ կը հնչեցնեն, սակայն ընդհանուրին մէջ ապահով կը զգաս: Չորս կողմերէն հայերէն հնչիւններ ներկադ եւ անցեալդ խառնելով կը ստեղծեն մտքիդ մէջ գունաւոր պատկերը Պուրճ Համուտի:

Կը յիշե՞ս երբ « ճեննէթ» կը ծախէինք դուն եւ ես ուրիշ հարիւրաւոր փոքրերու հետ, Պուրճ Համուտի փողոցները ման գալով, բոպիկ, անտեսուած, մի քանի «ղուրուշ» վաստկելու համար: Գիշերէն կը պատրաստէինք յաջորդ օրուան ծախուելիք «ապրանքը», բրգածել թուղթերու մէջ լեցուած աղի մանր կուտերը, Պուրճ Համուտի 58-ի համբաւաւոր «ճեննէթ»ը:

Աւելի մեծ տղաք կը վաճառէին Սարգիս Սարգիսեանի « կատակներ»ը, փոքր պատկերազարդ գրքոյկներ, որոնք լոյս կը տեսնէին ամէն հինգշաբթի առաւօտ կանուխ: Անգործ պատանի չկար 58-ի ամառը, բոլորս ալ աշկերտներ էինք հնակարկատներու, սափրիչներու, ոսկերիչներու, ատաղձագործներու, «տօքսմէճի»ներու ... քով: Համարձակ էինք եւ ինքնավստահ:

- Բարի լոյս, վարպետ, հայրիկս բարեւ ունի. աշկերտի պետք ունի՞ս:

Անցան տարիներ եւ Լիբանանի կրկնուող տագնապներէն ամենէն լուրջը եկաւ խանգարելու մեր անդորրը: Նախ փորձեցինք «ոչ ոքի հետ, ոչ ոքի դէմ» խաղալ, երբեմն նոյնիսկ անջիղ հայու կերպարով մը, « էրմէն» ով մը, անարգել անցնիլ սահմանագծերը: Աւելի ուշ գտանք բանալի արտայայտութիւնը մեր անկողմնակալ կեցուածքին՝ որդեգրելով « դրական չէզոքութիւն»ը: Չհաւատացին մեզի, թէ հայերը այս անգամ որոշած էին միակամ ըլլալ ( վերջապէ՛ս): Ուզեցին զէնքի ուժով պարտադրել իրենց կամքը : Իսկ մենք վերյիշեցինք մեր հին լոզունքը, «միայն զէնքով կայ հայոց փրկութիւն»

ու պաշտպանեցինք մեր թաղերը, « հայկական թաղերը»:

Մոռցանք «ինչպակ-դաշնակ» ը եւ պաշտպանեցինք մենք մեզ, հայուրթիւնը: Երկիրը տակն ու վրայ էր, սակայն մեզի համար յստակ էր ճամբան. հայկական միասնականութիւն եւ դրական չեզոքութիւն: Քաղաքը, Էշրէֆիէն, Մար Սըրխաէլը, Հաճընը, Պուրճ Համուտէն՝ Նոր Մարաշը, Սիսը, Արագածը բոլորը մէկ էին մեզի համար: Խմոր թխեցինք եւ հաց եփեցինք ժողովուրդին համար: Ջուրի, հեռաձայնի, ելեկտրականութեան գիծերը նորոգեցինք: Կրակներուն մէջէն վիրաւորներ փոխադրեցինք հիւանդանոց: Իսկ ծանր ռմբակոծումէն ետք, փլատակները մաքրեցինք եւ նորոգեցինք Պուրճ Համուտը, դուն եւ ես:

Պետք կա՞յ կրկնելու հինէն եկած յստակ պատգամը. « Երբ հայը միակամ եղած է, յաղթած է»:

Տարիներ ետք վերադարձած ես Պուրճ Համուտ: Հակառակ սուրացող ինքնաշարժներուն եւ մոթորսիքլեթներու վտանգին եւ աղմուկին, հոս ամէն բան հարազատ է քեզի: Աղտոտութեան կողքին կայ ջերմութիւն, աղմուկին կողքին կայ ծիծաղ, գարշահոտութեան կողքին կայ հանդուրժողութիւն: Հոս՝ հայ աշակերտներ, թաղի մը անկիւնը կեցած, կը մշակեն իրենց շաբաթավերջի ծրագիրը: Հայ օրիորդներ եւ տիկիներ կը վիճին հագուստի մը կամ կօշիկի մը մասին: Աշխատաւոր հայ տղաք կ'եսորուայ դադարը առած, խմբովին կ'ուղղուին Մանոյին «պաստորմայ»ի խանութը:

Նահրի կամուրջը անցնելով արդէն Պուրճ Համուտ ես, Արմենիա պողոտային վրայ: Ոսկերչատուններու ցուցափեղկերը կը շլացնեն քեզ: Կը թեքիս դէպի միջազգային համբաւ վայելող Արաքս պողոտան: Աչքերդ կը նկարահանեն վաճառատուներու ծանօթ անուններ՝ «Ֆէլէֆիլ Արաքս», « Սարօ », « Դեղարան Գեղարդ» ... Սակայն հոն, քիչ մը առջեւ խճողում կայ : Հայ ոստիկանապետը՝ Տօնականը, բացատրութիւն կու տայ թէ Չատկուայ տօնին առթիւ Արաքս պողոտայի վրայ աւանդական հակթախաղ տեղի կ'ունենայ:

Մտքով կը վերադարձան մօտ կէս դար ետեւ, երբ կեանքիդ տարիները կը համրուէին մատներուդ վրայ: Յարութեան տօնին առթիւ մաքուր հագած, մատիդ շուրջը օղակ կազմած երկար թելէ մը կախուած բուրդէ հիւսուած հակթամանը, մէջը սոխի կեղեւով ներկուած հակիթ մը բռնած ես: Կը շրջէիր թաղէ-թաղ, շահելով շատ մը հակիթներ, վերջաւորութեան վրայ տալու «հերոս» հակիթդ: Իսկ «գաթա-քահքէ»ի անուշ հոտը, որը կուգար մօտակայ փուռերէն, քեզ դիւրած կ'առաջնորդէր տուն, մի քանի «քահքէ»ով, աւելի զօրաւոր հակիթով պարէնաւորուելու եւ դարձեալ նետուելու փողոց:

Կը բացուին մտքիդ դարակները մէկ առ մէկ եւ կը յիշես հայերէնի ուսուցիչ՝ Նազարէթ Սէֆերեանին խօսքերը:

- Տղաք, Չատկին այսպէս կ'ըսեն. « Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

- Իսկ դուք կը պատասխանեք. « Օրինեալ Է յարուժիլնն ՀԱՅՈՒԹԵԱՆ»:

